

ՇԵՔՄՈՒՐԻ ԿՅԱՆՔԸ
ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ «ԱՐՔԱ ԼԻՐԻ» ՄԱՍԻՆ

«Արքա Լիրը» մահկանացու մարդու առօրյայի ողբերգական պատկերն է, մարգարեական շնչով գրված, և այս խորախորհուրդ, սահման չճանաչող գործը մեկնաբանել կամ վերլուծել, նշանակում է ինքն իրեն վերլուծել:

Ասում են Սիցիլիայի ծովահենները հաճախ բաց ծովում գերի էին բռնում աթենացիներին իրենց նավերով, և փոխանակ փրկանքի, այդ ավազակները պահանջում էին գերիներից էսքիլեսի գործերից կարգալ: Իմացողներին բաց էին թողնում, իսկ շիմացողներին կապում իրենց նավերի կայմերից, որպես պակասավոր, հետևաբար և վտանգավոր մարդիկ:

Նույն միջոցառումը որոշ փոփոխությամբ չէ՞ր կարելի արդյոք կիրառել և մեր օրերին՝ գոնե հետևողական լինելու համար: Առանց գործը մինչև կախաղանին հասցնելու, իհարկե, այլ համողող պարտադրությամբ մեր երիտասարդությանը սովորեցնել սիրել Շեքսպիրը:

Կերպարի շրթներում դրած հեղինակի խոսքերին բազմաբնույթ և բազմիմաստ մեկնաբանություն կարելի է տալ: Երբ դու կընտելանաս ինձ չափ այս գործի հետ, նրա յուրաքանչյուր կերպարը կտեսնես ներքին աչքերով, ինչպես ես, դու ինքը քո կարգին կարող ես նույնպիսի բազմիմաստ մեկնաբանություններ տալ նրա խոսքերին կամ որոնել ու գտնել այդ մեկնաբանությունները: Սակայն այստեղ մի դայթակղման վե՞մ կա: Բոլորովին այլ բան է այդ այլազան իմաստավորումների շարանը գտնել հեղինակի մեջ, նրա խոսքերի մեջ, ինչպես այլ բան է հեղինակի ընթերցումից քո մեջ առաջացած փոթորիկը բազմապատկել

քո սեփական զգացումների շարանով, որը շատ դուրին է, և քիչ թև
շատ զգալուն մարդը, որի աչքերը սուր են թաշկինակի հաճախ այ-
ցելովյան, կարող է բյուրապատկել, հեղինակից փոխառնելով դրու-
թյան բուսկի զլխավոր խմաստը Ա'րդ, իմացիր, արվեստը հեղինակի
մտքերի խմաստը բյուրապատկելն է միայն, Եթե չհասկացար այս, մի
բանի ներկայացումից հետո ոչինչ չի մնա, ոչ մի հետք Շեքսպիրի
«կիրից» քո խաղում, այլ քո սեփական անհատականությունը անզգա-
լարար կդառնա միմոսացումը այս վիթխարի և համապարփակ գործի:
Այնպես որ երբեք չպետք է թողնել հեղինակի փեշերը, այլ կառնել
նրան միշտ ավելի ու ավելի ամուր, մանավանդ խաղի փոթորկոտ բո-
սկների, և երբևէ չմոռանալ, որ դու ինքդ քեզ չէ, որ խաղում ես, այլ
պատկերացնում ես ամենահարազատ կերպով հեղինակի մտորումներն
ու ներքնաշխարհը, մտքերն ու կասկածները, տառապանքը, նրա ան-
սահման մարդասիրությունը, հակառակ պարագային կհեռանաս հեղի-
նակից, մի բան, որ ինքնրստիքյան մեծագույնն է բոլոր մեղքերից;
այլ հանդիմություն կունենաս հեղինակի փոխարեն ինքդ քեզ առաջար-
կելու հանդիսատեսին... ահավոր մի եղևն, որի անունը ոչ մի օրենս-
դիր չի գտել դեռևս:

Արտասուրբ, որ բեմում խոնավացնում է աչքերդ, նրանք պետք է
լինի, մի մոռանա, և ոչ թե բոնը, հուսահատ հեքը կրծքիդ՝ նրա հո-
գեկան տառապանքի աղաղակը:

Ահա սրանով է, որ զերասանը տարբերվում է խելացի հանդիսա-
տեսից կամ բանիմաց ընթերցողից:

Երբ ես, օրինակ, երիտասարդ էի և ազատ, որպես քամին դաշտում,
երբ ծանոթ չէի ընտանեկան քաղցր կապերին կամ հայրական պարտա-
կանությունյան դժնդակ, հոգնեցնող, բայց և չնայես վերաշինող հրապույ-
րը չկար ինձ համար... այլ կերպ էի ընդունում ես այս ողբերգությունը:
Այնպես ես այս մարդակուլ անհատակ անդունդի եղբրքներին թափա-
ռեցի անպատիժ ու անհոգ երկար տարիներ, իզուր նրա խորքից ող-
բացող խուլ հառաչանքը շոյեց երբեմն անտարբեր ականջս, իզուր բա-
րեխնամ բաղեղը նրա մեղքերին բղանցքիս փաթաթվելով կանգնեցրեց
ինձ, փորձեց համոզել... անդունդի մասին իմ շունեցած գաղափարը
ինձ ներշնչելով: Եվ երկար տարիներ խաղացի գործը անտարբեր, ան-
փուլթ... մինչև կյանքը հասցրեց իմ ներքնաշխարհը նրան հասկանալու
հազվագյուտ ունակություն և հասկանալուց հետո նրան բացատրելու

մարդկայնության, Եվ հիմա, որ տարիները կուտակվել են ուսերիս, հիմա հասկանում եմ և ուզում եմ հասկացնել քեզ, իմ սիրելիս, դու, որ պատիվ ունես ինձ արվեստակից լինելու վամ համախորհուրդ ես ինձ՝ ունկնդիրս լինելով, ուզում եմ մի նվեր թողնել քեզ մեկնելուցս առաջ՝ թանկագին նվեր, որ համատարած ճշմարտության հետ մաքառելիս ես ձևոք եմ ձգել:

Ամեն մեծություն մի քիչ միամիտ է լինում և գիտե, թե անսահման մեծության անմիջական արդյունքը միամտությունն է, որ կարծել է տալիս արքային, թե դնելով պետության հոգսը օտար ուսերի, ինքն անդորր ու լռիկ կսահի դեպի գերեզման:

Մոռանում է արքան, որ արքա լինելով ի ծնե, տիտղոսն այդ նրա ծնունդի պայմանն է, և հրաժարվել այդ պայմանից, նշանակում է կյանքից հրաժարվել, և նա պարտավոր է մեռնել իր տիտղոսով, ինչպես իր տիտղոսով ապրեց, և հրաժարվելով այդ տիտղոսից, նա հրաժարվում է ինքն իրենից, այսինքն՝ մահանում է:

Մերունի թագակիրը, թերևս իր ծնած օրից, միշտ շրջապատված է եղել կեղծ հարգանքի, ինչպես և կեղծ պաշտամունքի այնպիսի մի խնկարկուծյամբ, որի անկեղծության համը չի կարող զգալ հիմա նրա զառամած քիմբը: Եվ ամենաազնիվը բոլոր առաքինություններից՝ անկեղծությունը, որ ցուցադրում է հիմա իր կրտսեր դուստրը, հակադիր կերպով է ազդում արքայի խաթարված հասկացողության վրա: Անկեղծությունը նրա ականջին հնչում է որպես անքաղաքավարի պահանջկոտություն, կյանքից անբաժին շմնալու մի անտեղի փութկոտություն, տրվածից միշտ դժգոհ ու հոգնեցնող մի պահանջ, որին կշտացնելու և մեղմելու համար առատաձեռնության բոլոր աղբյուրները կցամաքեին առանց արդյունքի:

Եվ հենվելով անկեղծության իմաստի սեփական մեկնաբանության վրա, զառամյալ հայրը նույն արժեքով է վարձատրում իր զավակին, ինչ արժեք որ տալիս է ինքն այդ բառին:

Լիբ—Անկեղծությունդ թող լինի ապա բաժինդ հիմա:

Լիրը, ուրեմն, մի կարճ ժամանակ կենտրոնանալուց հետո պետական բարտեղի վրա սկսում է երկրի բաժանման հանդիսավոր հայտարարությունը. այդ բաժանման շնորհումը պետք է լինի լայն, անվերա-

դարձ ու հավիտյան, ինչպես ձրկիրն է լայն ու հավիտյան, ինչպես
ալեհներ արքան է անվերադարձ ու հավիտյան: Թվում է, թե կիրը խո-
սում է, ինչպես խոսելիս է կղիլ իր վանաչ տարիներին, պետական կա-
րևորագույն որոշումներ քննարկելիս:

Պետք է զգացվի, որ ալեհներ արքան լայնածավալ հողամասեր նվի-
րում է իրրև օժիտ իր աղջիկներին այնքան հեշտությամբ, ինչպես մի
ժողով կամ մի խաղալիք կնվիրելու հայրն իր զավակներին: Միևնույն
ժամանակ զգալ տալով հանդիսատեսին անգնահատելի արժեքները
իր առատածեռն նվիրներին: Անտանները, գետերը, ծովերն ու լեռները,
որ մի ժամանակ կազմում էին իր թագավորութունը, առանձին դրոշմ
են ստանում այնոր արքայի շրթներից դուրս գալիս, կրք քննելուց հետո
քարտեզը, ամբողջ հասակով կանգնում է դահույրում:

Լիր—Բոլորը, որ կա սահմաններում այս,
Խիտ անտանները, հարուստ դաշտերը,
Վարար գետերը, այլև խոտառատ
Լայն արոտները, բեղ և բեղանից
Ու քո ամուսին Ալբանի դքսից
Սերած սերունդին տալիս ենք բաժին
Եվ ժառանգութուն անխախտ օրհներով,
Տոհմական կարգի՝ մինչ ի լրումն ժամանակների:

Իր բառերի ընտրությամբ, նախադասությունների ազուցվածքով,
մտքերի գունավորումով՝ բաղմահարուստ այս տողերը շեն կարող շո-
յել հանդիսատեսի ականջը, կրք արքայավայել արտասանվում են:

Եվ որքան միահեծան, ինքնակալ, ուժեղ ու անհաղթ լինի Լիրի
գերակատարը այս տողերում, նույնքան ուժեղ կզգացվի նրա անսահ-
ման վիշտն ու կրած դաժան վիրավորանքը թե՛ որպես արքա, թե՛ որ-
պես հայր, իր անկումից հետո՝ ողբերգության վերջում: Այս է կերպարի
սկիզբն ու վախճանը՝ այնքան տարբեր իրարից:

Լիրը հիմա նման է ընդդիմադիր խոսակցությունից զազաղած մի
բռնկված ռումբի, որը կզնա այնքան, մինչև չի պայթի նա հազար փըշ-
րանքով իր սեփական ներքին բորբոքումից, որից հետո նա անպայման
կզառնա միշտ նույն սիրող հայրը, ինչպիսին էր նա, նախքան թե կույր
կատաղութունը անդիմադիր միջոցի մեջ մի ռումբ դարձներ նրան:

Լիրը այդքան անձնազոհ ճշմարտության աչքերին չի կարող նայել, նախ, որովհետև սովոր չէ, երկրորդ, նա ընդունակ չէ այդքան մեծություն պարփակել իր մեջ՝ առանց իր սեփական խորտակումը խոստովանելու։ Ահա թե ինչու գոռում է հուսահատ՝ «հեռու աչքիցս»։

Մենդից արքա է նա և իր սխալը խոստովանելու շափ մարդկայնություն եթե ունի էլ իր հոգու խորքում, չի տւում կամ կարող չէ մարդ լինել գոնե մի անգամ իր արքայի կյանքում և ստիպված պատժում է իր իսկ թագավորության պաշտպանած պետականությունը, մաղաչափ չիջնելու համար այն արքայական բարձունքներից, ուր գտնվում է նա թե իր ծննդով, թե ժառանգական տիրակալությունը։

Այստեղ պարզ պետք է երևա, թե ինչպես ծիրանին, թագն ու գալիսոնը կարող են աղավաղել մարդու մեջ մարդկայնությունը և թե ինչ անբուժելի ու խոր արմատներով է նստում փառամոլությունը մարդու հոգում, որից չկա փրկություն։

Քար լուծությունը զմուսել է բոլորի շրթները։ Ես, վերջացնելով իմ վճիռը, ծածկում եմ դեմքս ծիրանի վերարկուի մի ծայրով, այնպես, որ ոչինչ չերևա ինձանից, բացի ծանրաթանկ ու ադամանդակուռ թագից և ծալեծալ իմ անձը պատող արքայական ծիրանիից։

Նման ալեգորիկ պատկերի իմաստն այն է, որ մարդը չկա, այլ միայն նրա աստիճանը, որ փոխանակ պատկառելի ծերունու և հոր՝ Լիրի տեղ գահի վրա մնաց բազմածալ մի ծիրանի ու ոսկեքանդակ մի գահ միայն։ Որ մարդը գնաց և իշխանության պատկերը մնաց մարդու փոխարեն։

Միրանիի ծալքերով փաթաթված, որ սիրող հայրն էր, ծերունի մարդը, ժառանգական արքան վերջապես, և որպես սառած պաճուճապատանք նստած էր գահին, դուրս է բերում իր նիհար, ջլուտ ու գոսացած ձեռքը, ազդեցված ոսկե գալիսոնին այնպես, որ դժվարին է ասել, թե ձեռքն է բռնում գալիսոնը, թե՞ գալիսոնը անբաժան մասն է այդ ձեռքի։

Հետո դանդաղ սահում է արքայական ծիրանին և հանդիսատեսը տեսնում է Լիրին իր բնականոն պատկերացումով, որպիսին չէր տեսել դեռևս մինչև հիմա։

Նախկին փուխրսիրտ հորից և ողորմած ծերունուց մարդկային կույր կամակորուսության վեհանդանի պատկերն է նստած հիմա գահույթին։

Առասպելական կրոնապետի տպավորություն թողնող իր քիչ առաջ-
վա փառահեղ մորուքը չոր անապատում բուսած փուշ ու տատասկի-
պես է հիմա նախկին բարի աշքերը չկան։ Հայրը մեռավ ու թաղեց իրեն
իր սեփական ձեռքերով, ու միահեծան ինքնակալն է միայն, որ կեն-
դանացնում է զնացող հոր հին հիշատակի ուրվականը, միշտ առանց
ինքնակալի, երբեք չբանդվող պատկերով։

Այս տեսարանից սկսվում է կիրի բարոյական գահավիժ անկումը
մինչև անհատակ դժբախտության անդունդները կամ կիրի երկարատև
հոգեվարքն ու մահը, որպես արքայի, մինչև նրա կրկնակ ծնունդը որ-
պես մարդ ողբերգության վերջին վայրկյանին, մեռած Կորգեյիայի
գիակի վրա։

Սա է այս անավոր ողբերգության անմարդկային խորություններին
մարդկայնական ըմբռնումը, և տեսարանն այս՝ առաջին աստիճաններն
են վայրէջքի, որը եթե սկիզբն է կիրի անկումի, ապա նաև սուրբ պատ-
ճառը նրա վերածննդի։

Կիրի կերպարի թատերականացման ամենազգվարին բույններից
մեկն այն է, որ ծերունի արքան իր շուրջը պատահած դեպքերի ծան-
րակշիռ իմաստն ըմբռնում է միայն իր մոտավոր շրջապատի հոգեկան
վիճակից։ Ինքն այնքան բարձր է իր աստղով բոլորից, հետևաբար այն-
քան վերից է նայում բոլորին, որ չի կարող և ընդունակ չէ իր
անձի հանդեպ պարտադիր քաղաքավարության պահասելը հասկանալ...
Եվ այս նուրբ հոգեբանության վրա հիմնված է իրեն շրջապատող գրեթե
բոլոր կերպարների թատերականացման դժվարին դադանիքը, որովհետև
կիրը արքա չէ, հետևաբար ոչինչ չէ, երբ իրեն շրջապատողները առավել
կամ նվազ չափով նրա ծառաները չեն։ Եվ մի՞թե նույնը չէ կյանքում,
աշխարհում... այսինչ կամ այնինչը միահեծան ինքնակալ է հանդեպ իր
նմաններին վերջին հաշվով միայն նրա համար, որ իր նմանները կա-
մովին ենթարկվում են նրա ինքնակալության կամ նրա մեծության...

Կիրի այս խոսքերը յուրատեսակ սկիզբն են երկանց, նա այս բո-
պից սկսած սկսում է խորհել, ինչպես ինքն է ասում, թե պաշտամուն-
քը հանդեպ իր անձին, որ բնական էր կարծում նա, անանց ու ան-
վերջ, կարող է և պարտադիր մի բան լինել և իբրև այդպիսին ենթակա
չբանալու վտանգին... Իսկ թե ինչ կլինի այդ դեպքում իր արքայական
միահեծան ինքնակալությունը՝ ահա թե ինչի մասին է մտածում իրոք
որ դժբախտ ծերունին, երբ արքա չէ արդեն և իր ապրուստով ու հա-

ցով, ինչպես ինքն է ասում, պարտական է երբեմնի իր ստորագասնե-
րին: Սա է սկիզբը ինքնաքայքայման այն մեծ ողբերգության, որ այս
գործն է, որով պետք է մեռնի արքան, որպեսզի մարդը ծնվի: Իմաստա-
սիրական այս ահավոր հանգույցը Մակեդոնացու սրի մի հարվածով
չի պարզաբանվի, ինչպես փորձեց աշխարհակալն անել այդ պատմա-
կան գորդյան հանգույցը ճեղքելով, և այս հանգույցը կմնա առեղծ-
ված — ստեղծված կյանքի, գոյության ապրելակերպի ու մարդու ծնուն-
դի, քանի կթավալի մեր անզգա մոլորակը միջոցի անսահմանու-
թյան մեջ:

Խելացի ծաղրածուն աստիճանաբար պատրաստում է իր թագավո-
րին հասկանալու շուրջը տիրող մթնոլորտը, որն ինքը պատրաստեց իր
ցանկությունք և որի միակ պատասխանատուն ինքն է: Միևնույն ժա-
մանակ, կարծես ներշնչելով իր թագավորին աշխարհի ունայնության
հանդեպ միշտ ներողամիտ լինելու անհրաժեշտությունը, մանավանդ
որ կատարվածը չի կարելի ետ դարձնել, ինչպես եղածը չեղյալ նկա-
տել: Նա, ծաղրածուն, վարդապետում է հիմա իր տիրոջը, ինչպես
վարդապետել է միշտ, իր ամբողջ կյանքում, թե կյանքն իր բարիքնե-
րով հանդերձ մխիթարություն իսկ չէ մտածող մարդու համար և ար-
ժանի է միայն ծիծաղի: Գրանով ծաղրածուն նախապատրաստում է իր
ալևուր տիրոջը հետագա դեպքերին դիմադրելու, որ հակառակ էր նրա
մեծ տարիքին, գուցե և թույլ առողջության: Խեղկատակն այս բուպեից
հետզհետե երեխա դարձող կիրի համար այն անվեհեր ստնտուն է, որ
համբերությամբ ուղղում է ալևուր արքայի քայլերը դեպի կյանքի լա-
բիրինթոսը՝ անհենակետ ու անհանգրվան վերջը բոլոր վերջերի:

Լիր—Չար հիմար ես դու:

Մաղրածու—(Նստելով գահի բազրիքին, որպես արքայության ծիծաղելի
ծաղրանկար. հտպիտը շարունակում է)—Գիտե՞ս, մանչս, թե ինչ
տարբերություն կա շար հիմարի ու բարի հիմարի մեջ:

Եվ ծաղրածուն սովորեցնում է ծերունի կիրին տարբերությունը, որ
կա շար հիմարի և բարի հիմարի միջև, որ եզրափակիչ իմաստավո-
րումն է վերոհիշյալ բոլոր խոսակցության, որը թեև հպանցիկ կերպով
վիրավորում է կիրի ինքնասիրությունը իր խոր ճշմարտությամբ, սա-
փայն և միաժամանակ շեղոքացնում է այդ ինքնասիրությունը:

Պարզ զգացվում է որոշ տատանում կիրի վճռականության մեջ: Ծաղրածուի խոսքերը նրան, կարծես, խելքի են բերում, և արքան կասկածում է իր երկրորդ դուստր Ռեզանի մոտ իրեն սպասող ընդունելության վրա: Եվ մտատանջությունից հեշտությունը սահում է նա ղեպի ցավադին զղջումը իր կրտսեր աղջկա՝ Կորդելիայի հանդեպ: Այս բոլորն աչքան են դառնացնում, խճուղում ու խառնում նրա ներքնաշխարհը, որ իր ծաղրածուի խելացի խոսքերն արդեն մահվան դուռը հասած հիվանդի փրկարար ղեղեր են երբեմնի միահեծան, ինքնակալ ու ինքնակամ արքայի համար:

Կյանքի հասարակ իմաստասիրությունը, խաղաղ ապրելու հրապույրն աչքան խոր է արմատացած ծաղրածուի մտքերում, որ թվում է մարդու երջանկության բաժինն այս կյանքում միայն անհրաժեշտն է և ոչ թե ավելորդը: Այն անսահման ներողամտությունը սայթաքող մեծության հանդեպ, որ խոսացված է ծաղրածուի տողերում, հնարավոր կյանքի մի ամբողջ փիլիսոփայություն է, որով փորձում է խեղկատակը հորդորել ու մեղմել այն ջղազար գոյավիճակը, որ բաժինն է բոլոր նրանց, որոնք ուղում են կյանքից այն, ինչ չի կարող տալ նա: Մեկնաբաններից շատերը նմանության եզր են գտնում Գոն Կիխոտի ծառա Սանչոյի և կիրի խեղկատակի միջև, և իրավացի են: Կյանքի ընթացքի հետ դնացող ու կյանքի հետ միշտ համակերպվող նույն փիլիսոփայության արդյունքն են այդ երկու կերպարները և այն ջղակտոր ու տաժանելի պատկերների մեջ, որով այնքան հարուստ կերպով խճողված է այս ողբերգությունը՝ հանգուցիչ մխիթարանք է խեղկատակը: Գոնն ևս իրրե զաղտնիք կասեմ բո թավիշ ականջին, սիրելի՛ ընթերցող, որ եթե կիրը շլիներ իմ բաժինը թատրոնում, ապա նրա ծաղրածուն կլինեի ևս, և հավատացած եմ, որ ոչնչով չէի տուժի, իսկ թե խեղկատակը կտուժե՞ր, արգյոք, որևէ բանով՝ այդ նրա անսահման իմաստությանը պետք է հարցնել: Գատողությունը նրանում այն վիրարույթի նշտրակն է, որով վարպետ ձեռքերով խեղկատակը բաց է անում մեկ-մեկ կյանքից երես առած մարդու հոգեկան վերքերը, նախ ցուցադրում այդ վերքերով տառապողին՝ կիրին և հետո, հմուտ մատներով փակելով վերքը, հնարավորություն է տալիս բուժված հիվանդին առողջ աչքերով տեսնել ոչ միայն իր ապրած կյանքը, այլև ապրված կյանքը առհասարակ, տեսնել նրա ընթացքը իր բազմազան հորդումներով, լճացումներով, մանավանդ

տեսնել նրա վախճանը, սովորել նայել այդ անծանոթի դաժան աչքերին, նրա հետ զուգընթաց ապրելու համար վարքագիծ պատրաստել, չվախենալ նրա անսկզկալներից:

Լիրի խելագարութունը կարծես յուրատեսակ մի ինքնագիտակցութեան է հանդում, ասես կշռում է աշխարհի երևութները մի իմաստուն մտտեցումով... մնալով միշտ նույն անբուժելի խելագարը: Սա ևս հոգեբուժական տեսակետից խելագարութեան ընդհանուր երևութներից մեկն է: Սակայն նվազում է Լիրի ատելութունը դեպի աշխարհի ընդունված կարգերը, և նրա դիմադրութեան ուժը կարծես հետզհետե մարում է: Երբեմնի ահավոր պոռթկումները շփան ալլես: Կարծես համակերպված մի խենթ է հիմա արքան. մի վիճակ, որին ժողովրդական լեզվով ցնդած ենք ասում: Քննադատում է ինքը՝ այդ ի ծնե իշխանավորը, իշխանութեան դաղափարն անգամ: Արդարութունը, ընտանեկան կապերը նրա խոսքերում երևում են հիմա իրենց իսկական պատկերով, և ստեղծվում է այնպիսի դրութուն, որ լավ ըմբռնելուց հետո, ստիպված քեզ հարցես տալիս, թե ընդհանուր առմամբ ընդունված խելացի՞ն է խենթ այս աշխարհում, թե՞ ճանաչված խելագարն է աշխարհի խելացին:

Իրերն ու երևութները, ինչպես և դատողութունները Լիրի խոսքերում մերկ են հիմա ու սրբված կենցաղային ընդունված կեղծ ու պատիր շպարից: Ու դահազուրկ արքան կյանքի մերկ իրականութեան վարդապետն է հիմա ավելի շուտ, քան անբուժելի մի ցավագար:

Նման հոգեկան մետամորֆոզը թատերական արտահայտութեան տեսակետից դժվարագույնն է և շատ քիչ դերասանների է հաջողվել կանգնել այդ բարձունքների վրա գոնե այնքան ժամանակ, մինչև այդ բոլոր սարսափը կտրի-անցնի բեմառաջին ու լուծվի սրահում հուզված հանդիսատեսի սրտերի հետ: Եվ որքան գիտեմ, դարձյալ առաջնութունը պետք է տամ Ռոսսիին, մասամբ էլ նրա ժամանակակից խտալացի Մաշիին, իսկ մնացյալ բոլոր խելագար արքաները, որ տեսա, ըմբռնում էին այս նրբութունը, ճիշտ է, բայց նրանց խաղը այդ ըմբռնումը թատերականապես իրականացնելու մի անօգուտ ճիգ էր: Այսպես էր Սալվինին, այսպես էր Իրվինգը, որին տեսա: Այսպես էր և մի ուրիշ ողբերգակ, որին ծափահարեցի Փարիզում՝ ուսանող տարիներես... Եվ գոնե այսպես իսկ չէին բոլոր մնացյալները, որ տեսա ավելի քան կես դարվա իմ գործունեութեան ընթացքում:

Կիր — Եվ այդ վիճակում պետք է տեսնելի
Քեզ, խեղճ Գլուստերու Մանր գրութեան
Մեջ են աչքերդ, բաակդ թեթև
Տեսնում ես հիմա աշխարհի ուխտը
Իր մերկութեան մեջ:

Տեսնել իրերի գրութեանն իրենց մերկութեան մեջ՝ սակզծված գրութեան հետ հաշտվել չէ՞ միթե և գրութեան հետ հաշտվելը արդեն եղածն ընդունել չի՞ նշանակում արդուք: Ահա այս տեսանկյունից մտածնալով միայն հնարավոր է պատկերացնել այս տեսարանի ամբողջ մղձավանջը, այլև փրկել կերպարի ամբողջութունը հնարավոր մթազնումից:

Խորհուրդ կտայի խորհել այս մտքերի վրա բոլոր նրանց, որոնց վիճակված է հետագայում մտածնալ այս կերպարին, ինչպես բոլոր նրանց, որոնց վիճակված է հետագայում քննադատել բոլոր մտանցողներին:

Այս կետից սկսելով մինչև սղերկրագութեան վերջը կերպարի բոլոր արտահայտչական ու բնագրական միջոցները ես սպասված եմ համարում. սրանից դենը կիրք փոխանակ փրփրազեղ ջրվեժի, որպիսին էր մինչև հիմա, սահում է հանդարտ վայրէջքով դեպի հավիտենական խաղաղութուն, դեպի ծով:

Կերպարի փրփրազեղ ջրվեժի հանգամանքից, որ էր մինչև հիմա կիրք, անցնել ծանծաղուտ շամբուտները դերող խաղաղ առվակի անդորրութեան, որպիսին լինելու է սրանից հետո կիրք, — դերասանական արվեստի անխուսափելի սպառման վեմերից մեկն է, որից խուսափել կարողացել է միայն բացարձակ արտիստը, իսկ հանդուգն, փառամոլ դերասանիկը իր կտորտանքներն է թողել ջրվեժի հատակում՝ առանց շամբուտներին հասնելու: Ինքս շատ եմ տեսել նման կործանումներ և կործանումներ փառահեղ արտիստների, որոնք մինչև այստեղ մի կերպ հասել են, այո, բայց այս ճակատագրական վայրէջքում՝ ոչնչացել: Տեսել եմ դերասաններ, որ նման անհավասար կովում, եթե չէին էլ հաղթում, գոնե չէին մեռնում՝ միշտ կարենալ սկսելու համար նույն մաքառումը: Եվ որովհետև տեսել եմ այդ գիտակցական մահվան համար արտիստի մաքառումը մեկից ավելի մեծ արտիստների մեջ, հաճախ էլ ես եմ ենթարկվել կամովին այդ մաքառումին՝ կարծես մահվան բաժակը խմելով մինչև մրուրը:


Նախկին միահեծան արքան իջավ մարդկության սկզբնական աստիճանին: Մի խոսքով, արքան մարդ դարձավ:

Եվ այս ինքնագիտակցությունը, որ հասարակ մի մարդու համար աղետալի կլինեիր, կիրի համար մի մեծ երջանկություն է, ինչպես ցանկանում է ինքը՝ հեղինակը, ինչպես կհամոզվես դու ինքդ, հանդիսատես, երբ քեզ հետ վերլուծենք կիրի հետագա պատասխանը:

Նա հիմա ոչ միայն ծանր հիվանդությունից՝ ուղեղատալից, երջանիկ ապաքինության հասած մի մարդ է, այլ ծննդից իրեն պարտադրված արքայական ծանր պարտականությունից հազիվ ազատված մի մահկանացու:

Մինչև հիմա մենք ականատես էինք առանց իր սեփական հավանությունյան, իրերի բերմամբ, ծնունդով արքայացված մի անհատի ողբերգությունյան, իսկ հիմա ներկա կլինենք այդ հանկամտ արքայությունից միշտ նույն իրերի բերմամբ բռնի պոկված ու ազատագրված ողբերգությանը մի խեղճ անհատի: Նա այլևս կամենում է թշվառության ճիրանների մեջ արյունաքամ անիրավվածին իրավասու դարձնել կյանքի խնջուքին, հիվանդի բժիշկը լինել, ընկածի նեցուկը, վերջապես, իր սեփական ցավերի հանդեպ խուլ ականջներ ունենալ, ուրիշի տվյալտանքը լսել, հասկանալ՝ մխիթարելու համար, ձեռքը միշտ պատրաստ՝ անոթի բերաններ փակելու համար, մոռանալով հաճախ նույնիսկ իր սեփական անոթությունը, ոչ միայն հոգով, այլև մահկանացու մարմնով պատվարու վահան լինել բոլորի կյանքին, դրսից եկած հարվածին միշտ դեմ տալով իր սեփական մերկ կողերը: Այս էր կիրը: Մունդը պարտադրել էր նրան այս անմարդկային տաժանակիր շխատանքը՝ տիեզերական արդարագատության կիրառումը: Եվ սա էր պատճառը, որ կիրը երբեք ինքը չէր իր երկար տարիների կյանքի ընթացքին, այլ մի գերագույն պարտականության պաշտոնյան: Եվ միայն հիմա ինքն իրենը դառնալով՝ զգում էր, թե ինչ էր և ինչ եղավ:

Ահա մահացու գայթակղության վիճմն այս բյուրահորիզոն գործերի գեղծի, որն իր անձի վրա պատկերել կարենալու համար ոչ միայն պետք է կարենալ հասնել անվթար ու առողջ մինչև այս հեղաշրջումը՝ կիրի մարդացումը, այլ կարենալ հարյուր տոկոսով լինել այդ մարդը մի վերջին արարվածի ընթացքում... չորս լրիվ արարվածներ լինելուց հետո այս պսևդո-մարդը, որ արքան էր... մինչև իր մարդացումը: Ամբողջ չորս արարվածներ լինել մարդ-արարածի լոկ պաճուճապատանքը, լրիվ մարդ կարենալ լինելու համար վերջին ըոպպին՝ այս է, ըստ իս, լավա-



գույն բնութագրությունը, որ կարելի է տալ այս գործերի գործին: Այս է և միայն այս՝ սակի բանալին, որ հմուտ զերասանի վարժ ձևերի շնորհիվ կրանա հավիտենից կնքված մարդ-արարածի իմաստավորումը ամեն ժամանակների մարդ-հանդիսատեսի համար... մարդու թատրոնում:

Կիր — Ոչ, ոչ, ոչ, ոչ:

Բանա գնանք նստենք, մենք այնտեղ կերգենք՝

Վանդակում փակված մի դույզ թռչնի պես:

Իմ օրհնությունը ուղում էիր, շէ՛,

Քեզ կօրհնեմ, դատրիկ, հետս էլ կընկնեմ

Ոտերից առաջ, ներում կխնդրեմ:

Եվ այսպես կապենք, կերգենք, կաղոթենք,

Վաղուց մոռացված ավանդություններ,

Հին առասպելներ կպատմեմ ես քեզ,

Ոսկի թիթեռներ կորսամ քեզ համար,

Պալատից եկած լուրերը կլսենք,

Մարդիկ կպատմեն, թե ով է ընկնում,

Ով է բարձրանում, ով շնորհադուրիկ,

Ով շնորհ գտնում, թեկուզ մենք բանտի՝

Պատերում լինենք, սունկի պես հասնող,

Սունկի պես անցնող պալատի մարդկանց

Գահավեժ անկումն ու բարձրանալը,

Խարդախ դավերի ընթացքն ու ելքը

Կդիտենք, դատրիկ, ու կծիծաղենք:

Ահա թե ուր հասավ փառահեղ արքան: Կեղծիրով թրծված, ծիրանիով պատած, կեղծ մարդակերպը, որ արքա էր ծնված՝ մեռավ, թաղվեց ու նորից ծնվեց որպես մարդ:

Եվ կիրն իր այս վերջին խոսքերով ոչ միայն նորածին մի երեխա է հիմա, այլ նոր մարդ է, մարդուն վալիլ ամեն առաքինությամբ: Նա այնքան ուժեղ է հիմա կյանքը ապրելու իր սեփական ցանկությամբ, որ ասպետորեն ձեռնոց է շարտում բոլոր նրանց, որ կհանդգնեին խանգարել նրան՝ ապրել այդ կյանքը: Եվ այնքան վերացած է նա իր նոր ծնունդով, որ արտասուքի ողորմություն անգամ չի տա իր դահիճներին: Ուրեմն, կիրը ոչ միայն մեռավ ու նորից մարդացավ, այլ նոր մարդ է:

նա հիմա՝ յուրատեսակ մի դերմարդ և ուժեղ ու անսխալական շնորհիվ իր տեսածի ու ապրածի և նորը դիմադրելու արժանի ասպետ, թեև իր մահականացու կյանքով իր վերջակետին մոտ, բայց հոգեկան կյանքով անհաղթ մի տիտան: Եթե շհասկացար դու այս բոլորը, արվեստակից ընկեր, կամ եթե հասկացար ու շկարողացար իրականացնել՝ ապա հեռու փախիր դու այս կերպարից, ինչպես փորձության սատանայից, որովհետև այս հեղինակի ամեն մի բարձրությունից կարելի է թավազուր ու զահավիժ ընկնել, սակայն կամքի ուժով նորից վեր կենալ ու նորից ապրել, բայց այս բարձրությունից եթե ընկար՝ կտորտանքներդ էլ շես կարող գտնել:

Ահա և հասանք ողբերգության վերջին պատկերին, թատերական պաթեթիկայի երևակայելի բարձրագույն կետն է սա, ուր հեղինակը կարող էր հասնել:

Խաղի այս կետում հանդիսատեսի բողոքի ճնշումն այն աստիճանի է, որ թվում է, թե թատրոնի գմբեթը ահա կպայթի:

Այստեղ դերասանի քիչ թե շատ տանելի խաղը կարող է նմանվել վառողի այն փոքրիկ կայծին, որ մի վայրկյանում կրակ ու ծծումբ է դարձնում ամենադաժան անղզա լեռն անգամ ու շուրջ բոլորը ծածկում այրված մոխրի անհետք սավանով:

Խաղալու համար նման տեսարան՝ ապավինել միայն ձայնական տվյալների հարստության, աններելի երեխայություն կլիներ, որովհետև գոռում-գոշումը չէ, որ պետք է առաջ բերի պայթյունը, որի մասին խոսեցի, այլ անմարդկային ափսոսանքի գուցե հազիվ լսելի փսփսուքը, կիսաձայն թախիծը անդարձ կորստի անգիտված առաքինության հանդեպ, կատարված վայրենի անարդարության անհնարին սրբագրումի ցավը, և այս բոլորը՝ կցկտուր բառերով հազիվ իրար կապկպված, կարճ մի նախադասության արտասանությամբ: Այս տեսարանը, որ ողբերգության վերջակետն է, հուզականության տեսակետով իրեն պատրաստող նախորդ տեսարանն էլ չունի և ուղղակի պարսպի պատի նման մի րոպեում ցցվում է դերասանի կատարման առաջ՝ առանց նախապատրաստական սանդուխավորումների: Արվեստի արհեստականության տեսակետից նման բարձրության հասնել՝ դերասանական արվեստի դժվարագույն ու տաժանելի անցումներից մեկն է, որն իր նմանը չունի ներկայացումների պատմության մեջ: Եվ շատ մեծագույն դերասանների, հայտնի կորիֆեյների խաղի այս միջոցին ներկա եմ եղել անձամբ կու-

լիաներում, կթև ոչ դանելու, Կոնկ գուշակելու համար արհեստականու-
թյան այն անհրաժեշտ շարժանիչը, որին դիմում էին նրանք՝ բարձրա-
նալու համար նման բարձունքներ:

Օրինակ, պատուհանից ես տեսնում եմ Արարատը, և օրվա պայծառ
ժամերին ինձ հնարավոր է լինում հրեակալուծյամբ հասնել նրա սպի-
տակ դադաթին՝ հրեակալելի կամ տեսանելի կածանների ստանկոսիելով՝
միշտ կպած իմ պատուհանին: Քայց հրեք շեմ մտածել առանց գտնե-
լու ու ստանհարելու այդ կածանները, մի բուսելում ցյվել լեռան ալիփառ
զազաթին՝ նույնիսկ իմ հրեակալուծյան ամենահնար միջոցներով: Եվ
բոլոր մեծանուն, պատկառելի դերասանները, որոնց լացելիցի ես խաղի
այդ բուսելին կուլիսներում, նույնն էին անում, ինչ անում եմ ես բարձ-
րանալու համար լեռան կատարը... առանց շարժվելու իմ պատուհանից:
Գուստավո Սալվինին, օրինակ, որ որդին էր Քոմադոնյի և որի արվեստի
արհեստը հետապնդել եմ միշտ, ուր և հրը կարողացել եմ, մի շտանը-
ված ինքնախարազանման էր ենթարկում իրեն կուլիսների ետևում այդ
հայտնի տեսարանի մուտքից դոնե մի տասը բուսել առաջ: Ես իմ
իրեն հատակին, մի սուտունով բարձրանում, վերստին ընկնում գետին
փրփրած շրթներով, անմարդկային ձայներ, հրեի շտուված մարդկային
ինչ-որ բարբառի անխմաստ մոնչոններ, և այս բոլորն ուղղված էր
կմախքացած ձեռքերի մեջ ու կրծքին սեղմված մի Կորդելիայի կիսա-
մերկ ու թևթև հիտոնով ծածկված անշունչ խամաճիկի հետ: Իսկ իս-
կական Կորդելիան՝ լացակումած ու սարսափած կանգնած էր մի ան-
կյունում, մինչև մուտքի բուսելն հասնում էր և Գուստավոն, շարտելով իր
ձեռքերի մեջ շարչրկված անշունչ պուպրիկը, հարձակվում էր ու գրկում
խկական Կորդելիային իր մուտքից հեռու, թերևս շատ հեռու մի ան-
կյունից՝ լցնելով միջոցը վայրի ողբով:

Լացեր, ոռնացեր, մոնչեր ցավից...

Քիչ տարբեր նման միջոցների դիմում էին իմ գրեթե բոլոր ուսու-
ցիչները՝ այդ կերպարի անձնավորման ընթացքում և այդ կետում:
Նույնը անում եմ և ես՝ իմ մուտքից ավելի կամ նվազ հեռու մի կետից
սկսելով աղեխարշ ոռնոցը դժբախտ արքայի, միշտ դո՛հ եմ մնացել այդ
միջոցառումից, հրը շատ հեռվից սկսելով այդ ողբը, սպառված հասել
եմ մինչև բեմառաջը՝ անշնչացած Կորդելիայի ծանրութունը կրծքիս,
սահեցնելով նրան աստիճանաբար իմ հոգնած թևերից ծնկներիս, իսկ
ծնկներիցս՝ բեմի տախտակամածին, որովհետև արքայի անմարդկային
ցավը ավելի տպավորել է ինեղու համար պետք է լավի բեմի ետևից,

հնովից, իսկ բեմառաջը հասնելիս արքան պետք է երևա նույն ներքին փոթորիկով շարժրկված, բայց մարդկայնորեն ցավից սպառված: Սա հնարավոր է միայն այն ժամանակ, երբ իրական սպառոտը կատարվում է բեմի ետևում և մարդկային գրգռված ու դիակնացած ստվերն է հասնում մինչև բեմառաջը:

Դեռևս մինչև վարագույրի իջնելը կան շատ ըոպեններ, ուր ծայրագույն աստիճանի է հասնում իրի տանջանքն ու բողոքը, բայց այդ ըոպենները նման պետք է լինեն ամենակուլ հրդեհի վերջին ըոպեններին նախքան մարումը, երբ հանկարծ ալեկոծվում են կարծես մարելու մոտ բոցերը և հաղարկվածների հրեշի կերպարանքով փորձում են մի վերջին անգամ ևս լիզել, մոխրակույտ դարձնել երկնակամարի հիմքերը: Այս հանգչումների և կրկնակ բոցավառումների պատկերով բացատրիր քեզ, սիրելի ընթերցող, այս հիանալի մենախոսույթյան ամբողջ դեղհեղուկությունը՝ գիտակցաբար, ինքնամաշ քո մարդկային գոյության մութ ֆոնի վրա, և դու կլսես իրի այս գերագույն ողբը... եթե ականջ ունես լսելու համար: Իսկ եթե տեսարանը պատրաստված է ու մատուցված ինչպես պատկերացրի՝ կլսես և առանց ականջի՝ սարսափից լայնացած աչքերով միայն, կլսես... երբեք չմոռանալու համար այն, ինչ որ լսեցիր:

Կա մի ուրիշ ազդակ ևս այս վերելքին հասնելու համար: Դա գիտակցաբար հրաժարումն է ամեն արհեստականությունից և անձնատուր լինելն է քեզ լափող ներքին հուզումին, մի խոսքով, բնության ձայնին: Այս միջոցը ևս տալիս է հիանալի արդյունքներ, բայց որովհետև սա սոսկ անձնական հուզականության վրա հիմնված, թեև խիստ արժեքավոր, բայց միշտ քմահաճ միջոց է և որին եթե դիմել եմ ինքս էլ, ապա միշտ վախով և կասկածով... խորհուրդ չէի տա օրենքի իրավունք տալ նման երևույթի բեմերի վրա և սեփական առողջությունը հավետ կործանել՝ անցողակի ու կասկածելի մի հաջողության հետամուտ:

Լիբ — Լացե՛ք, ոռնացե՛ք, մոնչեք ցավից,
Ապառաժ եք դուք, և ոչ թե մարդիկ,
Թե ունենայի ես ձեր ձայները և ձեր աչքերը,
Ցավի ոռնոցից երկնի կամարը
Կխորտակեի: Նա զնաց ընդմիշտ:

Եվ հետո, հանկարծ, այդ ընդմիշտի առաջ, որ վերադարձ չունի, մահամերձ արքան ըմբոստանում է կատաղի գազազումով:

Ի՞նչ, ընդմիջտ...

և հենովիտով այն հանգամանքի վրա, որ մեռելներ շատ է տեսել իր կյանքում, ընդունում է մահվան անդառնալիտթյունը և իր ըմբոստ «ընդմիջտ» բառը կրկնում է նույն բառի համակերպված տոնով՝ «ընդմիջտ»:

Եվ որովհետև նրա դատրիկը մեռավ, ապա նա հավատացած է, որ նրա հետ և ամբողջ աշխարհը մեռավ:

Ես մեռելներ շատ եմ տեսել կյանքում
Եվ հասկանում եմ որն է մեռելը, որն է կենդանին,
Մեռավ դատրիկը, ինչպես ամբողջ երկիրը՝ մեռավ:

Հանկարծ մի վերջին փորձի կարիք է զգում և խելագար հույսի մի պոսթիկում է, հուսահատության արցունքների միջից մի ոստյուն, անհնարինը հնարավոր դարձնելու մի պահանջ վերջապես, որով արքան մի կտոր հայելիի կարիք է զգում:

Հայելի շուն՝ ք:
Տվիք, եթե նա դեռ շուն է բաշում,
Ապա շունչը հայելին կխավարեցնի:

Այս ահավոր մարդկային ցավի առաջ Քենտը, մոռացած իր ցավերը, աշխարհը կշռում է նույն նժարով, ինչ լիրն է կշռում, ու բացականում է ցավից զարմացած ավելի շուտ, քան թե բարացած:

Քենտ — Աշխարհի վախճանը սա՞ է միթե:

Էդգար — Ոչ, սա նախապատկերն է այն ահեղ օրվան:

Ալբանի — Մեռիր, ծերունի, և գոյությունից իսպառ ազատվիր:

Եվ խիստ տարօրինակ ու մարդկային է, որ հաղթական զորավարը՝ Ալբանին, ենթադրում է գոյությունը այնպիսի մի տանջանքի, որ լավ է համարում ազատվել նրանից, թեկուզ մահվան ճանապարհով: Ամենախորունկ հուսահատությունից հուստ ամենազահավիժ բարձունքներում է հիմա վաղեմի արքան: Եվ որպեսզի քեզ համար պարզ լինի, հանդիսատես, թե ինչ եմ անում ես այս բոպետում, ուշադիր լսիր:

Երբ հայելու փորձը ցանկացած արդյունքը չի տալիս, վայրի ձեռքերով պոկում եմ մազերս ու մոտեցնում եմ հոգնած ու մեռած այդ մազերի փունջը իմ թշվառ աղջկա անկենդան շրթներին: Հանկարծ ինձ թվում է, որ մազերս շարժվեցին նրա շնչից. ուրեմն նա կենդանի է: Գազանային ոստյունով հեռու եմ նետվում դիակից ու փաթաթվելով ներկաների ոտներին, գոչում եմ անշեշտ ձայնով.

Մազերը շարժվեցին, նա կենդանի է:

Հետո վազում եմ դեպի բեմառաջը ու խոսում ժողովրդին՝ նրան հաղորդելու ինձ հասած մեծ հրջանկությունը.

Օ՛, իրոք, եթե նա դեռ ապրում է,
Ես բոլոր կրած վշտերիս համար
Արթայավայել վարձատրված եմ:

Այս խոսքերը հանդիսատեսին ասելիս այնպիսի շեշտ եմ տալիս բռնորդին, որով թվում է, որ ես ուզում եմ իմ զավակի մահվան կոշմարից ազատել ոչ այնքան ինձ, որքան հանդիսատեսին, ասես պատառտեցիկով միանգամայն ծվեն-ծվեն շապիկս, որից ասես կտորտանքներ եմ նետում դեպի սրահը, որպեսզի իր արտասուքը շորացնի հանդիսատեսը: Ու ձեռքումս մնացած մի վերջին ծվենով ցամաքեցնելով աչքերիցս հոսող արցունքի ջրվեժը, ուրախ խելագարությամբ հրճվում եմ՝

Նա դեռ ապրում է,
Իմ կրած վշտերի համար
Արթայավայել վարձատրված եմ:

Այս անցումը, ինչպես և շատերը այս ողբերգության մեջ, բոլորովին իմը լինելով, ես թույլ տվի ինձ մի քիչ երկար կանգ առնել նրա բացատրության վրա:

Եիշտ այդ միջոցին Քենտը մոտենում է ինձ կամ կիրին, ինչպես ուզում եք, ու համբուրելով ծվեն-ծվեն պատառոտված արթայական զգեստի մնացորդները, ուզում է դեպի իրականութուն բերել ինձ:

Քենտ — Իմ վեհափառ տեր.

Բայց այս բոպին խելագարության կոհակը նորից կուրացրել է ինձ: Ես չեմ կարողանում ճանաչել Քենտին.

Լիբ — Հեռացիր, խնդրեմ:

Էդգարը, միջամտելով, ուզում է ամեն կերպ կենտրոնացնել իմ ցրված ու հիվանդ ուշադրությունը Քենտի վրա:

Էդգար — Ասպետ Քենտն է սա:

Ձեր հավատարիմ ծառան է, արքայ:

Լիբ — (Հանկարծ ուշքի է գալիս, ճանաչում է Քենտին, փաթաթվում նրան, ինչպես վերահասու անկման միջոցին հիվանդ ու տկար մահկանացուն փառահեղ մի կազնու կրթաթաթվի: Երջանկությունը և հույսը ծագում են ծերունի արքայի հանդած աչքերի մեջ, իր հավատարիմ ասպետին ճանաչելով՝ կարծես վերածնվում են նրա մեջ անցյալ փառքի փշուրները և թշվառ մարդը մի բույկ ևս արքա է դառնում: Կարծես ուզում է հրամայել նրան ինչ-որ մի բան, բայց ճիշտ այդ պահին խնկարությունը կրկին տիրում է նրան: Եվ իր դեմ ու մարդկանց դեմ կատարված բոլոր ոճիրների պատասխանատուն մարդն է հիմա նրա աչքում: Եվ մարդը գիտակցորեն կամ անգիտակցորեն պատասխանատու է այն ընդհանրական ոճրի համար, որին զոհ զնաց միակ խարխսին այս աշխարհում: Եվ արձակվելով Քենտի արցունքոտ կապանքներից, գոռում է աղիողորմ հուսահատությունով):

Լիբ — Ժանտախար ձեզ վրա, մարդասպաններ եք դուք,

Դուք դավաճաններ, եթե ուզեիր,

Նս կարող էի դեռ նրան փրկել:

Հիմա նա զնաց, հավիտյան, անդարձ:

Այս վերջին երկու բառերը «հավիտյան», «անդարձ», պետք է անդարձ հավիտենականության միապաղաղ միօրինակությունը, անգույն, անեզր, անձե, անիմաստ անդառնալիությունը պատկերացնեն հանդիսատեսի հոգում: Եվ ինքը՝ Լիբը իր ասածից սարսափած, պետք է կրկնի այդ «հավիտյան», «անդարձ» բառերը այնպես, ինչպես հանդիսատեսը լսեց: Եվ այդ ահավոր ինքնախարազանումից հալածական, կրկին նետվելով իրականության մեջ, զգում է Կորդելիայի դիակն իր կրծքի վրա:

Լիբ — Կորդելիա, դատրիկ, կաց, մի բույկ էլ կաց:

Եվ հանկարծ նրան թվում է, որ դիակը խոսեց: Անդրաշխարհից եկած իր հոգեհատորի ձայնն է դա կամ այդ ձայնի երջանիկ ինքնա-

խաբկանքը, որ լսեց ալևոր արքան, բայց որը, սակայն, չհասկացավ: Եվ ահա դիմում է նախ՝ սառած ու մեռած դիակին, և երբ պատասխան չի ստանում, դիմում է իրեն շրջապատողներին.

— Հը, ի՞նչ ասացիր,
Չլսեցիր դուք, թե ինչ ասաց նա,
Ափսոս, շատ քնքուշ, մեղմիկ ձայն ունեի.
Հազվադուրս բան է դա կնոջ համար:

Սոսկալի ժամ. իր կրծքում անշարժ, քարացած դիակի մեղմիկ ձայնը լսել... երբ դեռևս նա դիակ չէր: Եվ գնահատել այդ երևույթը որպես թանկագին առավելություն կնոջական արժեքի, ապրել և վերհիշել կենդանին, երբ նա սառած դիակ է գրկումդ. ահա երևույթ բեմական թատերականացման տեսակետից գրեթե անհնարին: Եվ հետո, հանկարծ, կարծես ուրախացնել ցանկանալով մեռածին, հանդիսավոր կերպով նրա կանջին հայտնել, թե ինքդ քո ձեռքով սպանել ես նրան կախող դահիճին:

Անկեղծ և ճշմարիտ ասեմ ձեզ, իմ ընթերցողներ, ոչ ոք այնքան հեռու չէ գնացել իր ողբերգության մեջ, որքան Շեքսպիրը, ոչ ոք այսքան հեռու չի տարել իր սովերի փտեկից ոչ ինձ՝ դերասանիս, ոչ ինձ նմանին, ոչ էլ քեզ, հանդիսատես, ոչ էլ քեզ նմանին:

Իր — Գիտե՞ս, քեզ կախող ստրուկ դահիճին
Սպանեցի ես:

Հնարավոր է հավատալ, որ հոգեկան այդ վիճակի մեջ այդ խորունկ ծերունին իր դատերը կախող դահիճին իր իսկ ձեռքերով սպանեի, և իր երեխայի մահվան վրեժը լուծելու անհազ քաղցից թելադրված մերկ հեթադրություն չէ՞ դա, քան իրականություն, որ ինքնագով դահիճի նման իրեն է սեփականացնում ծերունի արքան:

Եվ ահա բոլորին տատանող հավատքը ամրապնդվում է և դառնում իրականություն դեպքերին ներկա գտնվող սպայի հայտարարությամբ...

— Ես հաստատում եմ. մարդուն սպանեց:

Եվ զարմանալին այն է, որ ինքը, արքան ևս չէր հավատում, որ սպանել է, բայց հիմա, երբ արդեն կենդանի վկա կա, իր տատանումը

ես հավատք է. ու բարգմաձայն հրդեհոնի պես որոտում է վրեժխնդիր հայրը ոչ միայն հպարտ իր կատարածից, այլև հոժար նույնը կատարելու, միայն թե ոչ որ շահնդդնի մոտենալ իր զավակին պարանը ձեռքին, թեկուզ աստվածների կամակատարը լինի նա:

Կիր — (ժայռահեղ հպարտութեամբ).

— Սպանեցի, շէ՛ (հետո, հանկարծ վերադառնալով, հիշում է հիվանդ վերհիշումով, թե ի՞նչ էր և ի՞նչ եղավ):

— Է, կար ժամանակ,

երբ իմ սուսերս նրանց բոլորին

Պարեցնում էր. հիմա ծեր եմ ես.

Եվ այսբան անուր շարիքները ինձ

Կուրացրել են: (Ձգալով Քենտի թաց արցունքը իր ձեռքերի վրա):

Ասա, դու ո՞վ ես,

Աչքերս լավ չեն, մոտ եկ,

Որ տեսնեմ:

Քենտ — Թե երկու մարդ կա,

Որոնց հեղհեղուկ բախտը սիրել է,

Եվ միանգամայն անվերջ հալածել,

Նրանցից մեկին տեսնում եր այստեղ:

Կիր — Աչքերս լավ չեն,

Մոտ եկ, որ տեսնեմ:

Իմ ասպետ Քենտը չէ՞ս, միթե:

Քենտ — Ես եմ, իմ արքա, բո ծառան՝ Քենտը,

Մի՞թե շեր հիշում Կայոսին, արքա:

Կիր — Օ՛, կտրիճ մարդ էր:

Կայոսը մեռավ: Ես փորձով դիտեմ:

Պետք եղած դեպքում զարնում էր, ջարդում,

Հիմա մեռել է և արդեն փակել:

Քենտ — Նա դեռ չի մեռել, Կայոսը ես եմ,

Ես կծառայեմ ձեզ, բանի շունչ ունեմ:

Այս բոպեից սկսած, վերջին անգամ լինելով, խելագարութեան մութը հետզհետե իջնում է արքայի հոգուն և դատողութեան վերջին ճանապարհին իսկ իսպառ մարում է:

Կիր — Հիմա կտեսնեմ:

Քեւեա — Ես հետեւեցի քո դժբախտութեանը
Քայլ առ քայլ, արքա,
Թեև արտրված կարծում էին ինձ:

Կիր — Բարով ես եկել:

Քենտը սրան պատասխանում է այնպիսի մի տոնով, որ պատրաստ է նույնիսկ ինքն իրեն ոչնչացնել, եթե դրանով աշխարհի շարիքը կարող է ոչնչացնել:

Քեւեա — Ոչ, մեղանից ոչ ոք բարով չի եկել:
Այստեղ ամեն ինչ տխուր է, մեռած.
Անձնասպան եղավ քո ավագ դուստրը,
Հուսահատ մեռավ:

Կիր — Կարող է լինել, այո, երբեմն
Այդ պատահում է:

Ալրաբի — Նա չի հասկանում, թե ինչ է խոսում:
Մի տանջեք նրան, իզուր է, ասպետ:

Սպա — (Ներս մտնելով) — Էդմունդը մեռավ:

Ալրանին այնպիսի տոնով է խոսում, որ կարծես տիրող խախուտ դրութունը, քաղաքական, թե ընկերական, նա իր հուժկու ձեռքերով կանգնեցնում է փլուզումի առաջ: Լիրը, որ ամբողջ հինգ երկար արարված ինքնիշխան տեր էր, հիմա իր կարգին ենթակա է Ալրանի անհողդողդ կորովի, անբասիր պատվախնդրության, աննահանջ քաջության թելադրանքներին: Ամենածանր ողբերգութունը լրացնելու և տրամաբանական հանգումի հասցնելու հեղինակի աիրած ոճն է այս և հոգեբանական մի շարք կետերով այլաբանական խոր նմանութուն ունի «Համլետ» ողբերգության վերջին պատկերում երևացող Ֆորտինբրասի հետ: Երկու օձաբնույթ արքայադուստրերը չկան այլևս, իրար խայթելով սատակել են նրանք իրենց սեփական թուլնից, գարշելի էդմունդն իր վերջին շունչը փչել է մի որդաբույծ աղբանոցի վրա և կրկնակ արքայական մահիճ մոլորեցնող այդ սրիկան իր կարգին դիակ է հիմա, ազնւրվազարմ Գլոստերը չկա՝ առանց աչքերի աշխարհի մութը տեսնող այդ մարդը որդու կարոտից փակեց աչքերն ավելի շուտ՝ հայրահալած սրիկայի դավադրութունից: Խելացի, հեռատես, կյանքը հասկացող և նրա հետ քայլող ծաղրածուն չկա, նրա խեղդամահ դիակը տեսնելու

հնր քիչ հետ իր արտոջ ստրկի ատաջ: Չկա նույնպէս այն գարշազար
լիզողը՝ Օսվալդը, որի անարժան անձը. ծեծել ու ցիխ էր ուզում շինել
ասպետ Քենտը:

Եվ միայն արբան է մնացել այսօրան կործանումների մեջ հաստատ,
և Ալբանին անօրինում է.

Ալբանի — Եվ դա կարեւոր չէ,

Լսեցիք կամքս, դուք, ազնիւ լսողեր,

Այն ամեն ինչը, որ դեռ կարող է

Այս մեծ դժբախտի վերքերը բուժել

Եվ մխիթարել, պետք է կատարել:

Եվ մենք վճռում ենք այս արքայական

Մերունուն հանձնել

Պետութեան ղեկը, բանի ապրում է,

Իսկ ձեր երկուսի իրավունքները,

Դու՛ ասպետ Քենտ, դու, ասպետ էդգար,

Հավելվածներով եւ հաստատում հմ

Եվ դեռ պարտական ու շնորհապարտ

Մնում հմ եւ ձեզ: Բարեկամներին

Արժանի պարգև, թշնամիներին՝ հալածանք ու մահ:

Այստեղ նայեցիք, այստեղ նայեցիք:

Բոլորը հավարվում են Լիրի շուրջը, որը ծնկաչոք, գետնատարած
իր աղջկա դիակի ատաջ, ուզում է վերստին կյանքի կոչել արդեն սա-
ռած դիակը:

Լիր — Չէ, չկա, չկա, շունչ չկա:

Եվ ինչո՞ւ մուկը, շունը և կամ ձին

Ապրում են, շնչում, ու դու չե՞ս շնչում:

Դո՞ւ էլ գնացիր, և էլ հետ չես գա,

Հետ չես գա երբեք (ինքն իրեն, ծայրագույն հուսահատու-
թյամբ) — Երբե՛ք, օ՛, երբե՛ք

էլ չի գա երբեք: (Խեղդվում է ու դիմելով ներկաներին)

— Արձակիր, խնդրեմ,

Վզիս կոճակը. շնորհակալ հմ:

Տեսնո՞ւմ եք դուք այս... դեմքին նայեցիք:

Շրթները տեսեք... (մեռնում է):

Այս սոսկալի վերջակետում, որով իջնում է վարագույրն այս ողբերգութեան անկրկնելի գեղեցկութունների վրա, միշտ ստիպել է ինձ հոգուս խորքից շնորհակալ լինել անբարբառ ու մունջ բնությունից, որ գոնե այս վերջին ժամին վերադարձրեց թշվառ արքային անղգա նյութին, որի շաղվածքն էր, բարերար մատով փակելով արտեանունը հոգնած ու ալևոր մարդու, որ շտեսնի աշխարհը, որի զգայուն մասը կազմեց մի կարճ ժամանակ և հանգիստ գտավ հավիտենական ու անկարեկիր անզգայութեան մեջ:

Եվ Քենտի ասպետական հոգին երևի համաձայն է ինձ հետ, որ կիրի դիակի վրա ընկնող հուսահատ էրզարին կանգնեցնում է հետևյալ խոսքերով, որ իր բնույթով խաղի վերջարանն է.

Էդգար — Օ, իմ թագավոր, աչքերդ բացիբ:

Քենտ — Մի տանջիր նրան, թող խաղաղ գնա.

Բարեկամ չէ նա, ով ցանկանում է հավիտենական

Հանգստից նրան կյանքի տանջանքին

Վերադարձնել:

Լինի «Օթելլոն», լինի «Համլետը» թե «Լիրը» գրելիս, ես մի րոպե իսկ չեմ մտածել, որ Շեքսպիր եմ գրում կամ տուրք տալիս շեքսպիրագիտութեան, այլ ձայնագրել եմ իմ մայրենի լեզվի հարուստ նոտագրութեամբ այն խորունկ, բազմահորիզոն ու անհատակ սիմֆոնիան, որ հեղինակի աղաղակն է եղել ականջիս երկար, երկար տարիներ:

Այս ամենը գրված են ոչ թե բանավիճելու կամ ինչ-որ բան ասացուցելու ոգով, այլ իմ թատերական ապրումները թղթին ու ժամանակին հանձնելու ցանկութեամբ՝ առ ի մխիթարանք և հօգուտ ինձ նման ուղեկորույս ճամփորդների, մանավանդ՝ իմ կրտսեր արվեստակիցների: